# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3130-Ա «24» հունիսի 2026 թ.

## ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԻ ՇԱՐՔ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ, 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՈՒ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6.1 կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 83-րդ և 84-րդ հոդվածներով.

1. Հաստատել Երևանի ենթակայության «Երևանի «Ավան» առողջության կենտրոն», «Երևանի «Արաբկիր» առողջության կենտրոն», «Երևանի «Բագրատունյաց» առողջության կենտրոն», «Երևանի «Բաղրամյան» առողջության կենտրոն», «Երևանի «Դավթաշեն» առողջության կենտրոն», «Թիվ 4 պոլիկլինիկա», «Երևանի «Կարմիր Բլուր» առողջության կենտրոն», «Մալաթիա-Սեբաստիա» առողջության կենտրոն», «Երևանի «Նոր Նորք» առողջության կենտրոն», «Երևանի «Սեբաստիա» առողջության կենտրոն», «Երևանի «Տիգրան Մեծ» առողջության կենտրոն» «Երևանի «Արշակունյաց» առողջության կենտրոն», «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» և «Երևանի «Քանաքեռ-Զեյթուն» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների կառուցվածքները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը, 2026 թվականի եկամուտների և ծախսերի ու դրամական միջոցների հոսքերի նախահաշիվները՝ համաձայն N 1-42 հավելվածների:

2. Հանձնարարել սույն որոշման 1-ին կետով նշված փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին «Պարգևատրում» հոդվածի գծով գումարները, ինչպես նաև՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին կանխատեսվող դրամական միջոցների ազատ մնացորդն օգտագործել բացառապես աշխատակազմի առողջապահության և ֆինանսական վարչությունների հետ համաձայնեցնելուց հետո:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության

պետի և սույն որոշման 1-ին կետում նշված փակ բաժնետիրական ընկերությունների տնօրենների վրա:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Ս. Մադաթյանի վրա:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**